

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻ 8

22 ՓԵՏՐՎԱՐ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերթի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար հառտուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանք կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը տարբերութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են իսկոյն իմացներն տարբերութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ տարբերութեան չեն նկատուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշէլի պայմաններով:

Ձեռն-Քէ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه غاطه (ماسيس) غرضه اداره

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՐԵԼԻՆ

Եթե երախայ մը նիհար է և չի զաւարիւր նէ. ախորժակ չունի և կերածը կատարեալ չի մարսեր նէ, և աղւայները — որոնք չեն մեծնարկօր նէ — ոչ բնականապէս միւս աղետները կ'աւելցընէ թող իրեն տրուի.



SCOTT'S EMULSION.

Ասիկայ մանկանց համար ախորժակի կերակուր և դէպ մըն է, և երախայն զայն խմած ատեն վերջի աստիճանի ուրախութեան մէջ կ'ըլլայ: Մայրը շուտով կը տեսնէ թե ինչպէս երախային բոլոր վիշտերը անմիջապէս կը դադրին. որպէս թէ նոր արեւուն և նոր կեանք բոլոր անկարգութիւնները չնչելով՝ մանկան ախտերը առողջութեան և զուարդութեան փոխադրեցին: Երախայն միշտ պատրաստ է այս նոր (ուտելիք և) բնական ախորժակով կրկնել. Արեւիկի զաւարիւր և պզտիկ ճերմակ աղւայները առանձնաւոր և վիշտերու կ'ըսկսին երեան ելլել: Ըսգօթի Բաղադրութիւնը երախայից առողջարար գորութիւն և զաւարում կուտայ, մարսողութեան կ'օգնէ և մարմնոյ ընդհանուր զօրութիւն կը պատճառէ:

ԸՄԳՕԹԻ ԲԵՂԸԹՐՈՒԹԻՈՒՆ

բոլոր աղայոց Սիրելին է և զանոնք շուտով վարդապետ երեւոյթի և զօրաւոր և կատարեալ առողջութեան պատկերներու կը փոխէ: Ըսգօթի Բաղադրութիւնը՝ վրան այս նշանով վարդապետ փաթեթի մէջ ծաղուած շիշերէն կը ծանցուի:

Շիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

20

Բոլոր գեղարարները և գեղարարները ին ծախեն:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԲԻԸԳԱՆԳԵԱՆ ԳՐԱՏԱՆ, Ղալաքիա, Սեղբոս խան, Թ. 5—7:

Յ. ՎՍՍԻԼԵԱՆԻ չորս տեսարկներու մէջ ամփոփուած Գրավարժութեան նոր դրութիւնը հրատարակուեցաւ: Դիմել բոլոր հայ գրավարժաւաց:—Դին հատին 20 փարայ:

ԲԵՐԱՅԻ ՄԱՐԱՏԱՆՆԱՄԸ ներկայիս կը փութայ ծանուցանել թէ արդուիլի ծանօթ վարպետ Յարութիւն էֆ. Գաթրճեան արդուիլի և լուսացի գործարան մը բացած է ի Բերա, Թագսիմ փողոց, թիւ 19: Սոյն վարպետը իր խնամեալ աշխատութեամբ, մաքրութեամբ և չափաւոր գիներով իրեն գիտողները գոհացնելու առաջադրութիւնէ զատ, Աղբարտարանմէն շահարածին մը նուիրելու ինքնայորդոր և դուրիլի յանձնառութիւնն ևս ունեցած է:

ԹԵՅ

ԹԵՅ

ԹԵՅ



Ընտիր

Հոտաւետ

Խնայողական

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Վաճառատունը թէ՛ պատրաստ եւ թէ՛ օր ըստ օրէ հասնող թարմ և ազնուագոյն տեսակ թէյներով կրնայ այսօր անմրցելի ամառութեամբ գոհացում տալ թէյի նոյն իսկ էն խստապահանջ սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ և ԻՍԱԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի դաւառներու հետ և յանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր, ու հոտաւետ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարեցը անգամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ Վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի կից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ և փոքրաքանակ թէյի հոխ մթերք մը:

ԱժԱՆ ԱժԱՆ ԱժԱՆ

ՄԱՍԻՆ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 8

22 ՓԵՏՐՎԱՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ոսանաւորի մրցում. ԽՄԲԱԴԲ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ:— Խառնակ. յանգեր. ԱԼՓԱՍԼԱՆ:— Հին Դեմքեր Պեղոս Պատրիարք Ազրիանուպոլսեցի. Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆ:— «Մեզ ալ մի' մոռնար». ՔՐԻՋԱՆԹԷՄ:— Բժիշկն ու ժողովուրդը. ՏՈՒՔԹ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ:— Օրումն կեանքի նօթեր. Տ. Ա.— Զօլայի վերջին վեպը. «Vérité». ԴԱՄԵՐ:— Այծեմնիկի փունջը (Թերթոն) ԱՆՏՐԷ ԹԵՕՐԻԷ:

ՈՏԱՆԱԻՈՐԻ ՄՐՅՈՒՄ

ՄԱՍՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՆԻՒԹԸ.— ԴՆՆԻՉՆԵՐԸ.— ՊԱՐԴԵԻԸ

Ինչպէս նախորդ թիւով ծանուցինք, Մասիսի Խմբագրութիւնը Ռոմանաւորի Մրցում մը կը հաստատէ՝ նպատակ ունենալով քաջալերել բանաստեղծութեան հակում ունեցող նոր գրիչները իրենց սկզբնաւորութեան մէջ: Դիւրութիւն մը ընծայելու համար, կանխաւ կ'որոշենք նիւթը որուն վրայ պիտի գրուի ոտանաւոր մը, աւելորդ է ըսել թէ յանգաւոր, ինչ չափով ու ձեւով որ ուզուի, — յիսուն տողը չանցնելու պայմանաւ սակայն:

Բայց «նիւթը որոշել» ըսելով՝ չենք ուզեր կաշկանդել գրողներուն միտքն ու գրիչը. ստորի, Քննիչներուն կարծիքը աւանդէ ետքը՝ կուսանք աւտօիկ լայն սահման մը. —

Դրուելիքը պիտի ըլլայ սիւրային բանաստեղծութիւն մը

Բ Ա Ժ Ն Ո Ւ Ա Մ Ս Ի Ր Տ Ե Ր

Վերնագրին առի, որուն մէջ կրնան իրենց տեղը ունենալ հեռաւոր կամ մօտաւոր յիշատակ մը, անցք մը, ազաւորութիւն մը, նկարագրականով մը կամ խոհերով համեմուած, ինչպէս որ ներշնչեն գրողին ճաշակն ու զգայումը: Վերջապէս այս ընդհանուր նիւթին նուիրուած ոտանաւոր մը, առանց ո'ր և է սահմանադրումի:

Զեռագիրները պիտի ընդունուին յառաջիկայ Մարտ 22ին մինչեւ Ապրիլ 22, մէկ տմաւան միջոցի մէջ: Սոյն երկու թուականներէն առաջ կամ ետքը համեմելիք որ և է նամակ, Մրցման Ենթարկուելու համար, անընդունելի պիտի համարուի: Նոյնպէս անընդունելի պիտի դատուի և Քննիչներուն չափով ներկայացուի որ և է ոտանաւոր որ հեղինակին ստուգադրութիւնը կրէ:

Իւրաքանչիւր ոտանաւորի հետ, միեւնոյն պահարանին մէջ պէտք է գրուած ըլլայ փոքր

րիկ գոց պահարան մը, գրողին անունը, մականունը ու հասցէն պարունակող՝ որոշ կերպով : Իսկ այդ փոքրիկ գոց պահարանին վրայ պէտք է նշանակուած բլլայ միայն՝ ոտանաւորին ներքեւ դրուած ծածկանունը կամ թուանշանը, — Դրցանակը չափած պարագային՝ իսկոյն յայտնուելու համար : Այս կերպով, Քննիչները անձի հետ գործ չեն ունենար և գըրուածքը իր իսկական արժէքէն միայն կը դատեն, ինչպէս կը սպասուի արդէն անոնց առնչութեանն ու ձեռնհասութեանն՝ իբրեւ մեր ամէնէն վաղածանօթ ու սիրելի բանաստեղծները

Տ ե ա ր ք

ԱՃԷՄԵԱՆ ՄԿՐՏԻՉ

ԹԵՐՁԵԱՆ ԹՈՎԱՍՍ

ՓԱՆՈՍԵԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ

որոնք՝ իմբագրութեանս գիմումին վրայ՝ աղնուարար յանձն առին այս մրցման Քննիչներն բլլալ, անգամ մըն ալ ցոյց տալով իրենց համակրանքը Մասիսին նկատմամբ և իրենց տաղանդէն ու երիցութենէն սպասուած խրախոյսը ընծայելու համար բանաստեղծական ձիւղին մշակմանը՝ նոր սերունդին մէջ :

Երկու սեռէ ամէն կարգի գրողներ կրնան մասնակցիլ այս Մրցման որուն արդիւնքը պիտի ծանուցուի Մայիսի սկիզբները, — Քննիչներուն տեղեկագրովը մէկտեղ ի հարկէ, — և լաւագոյն դատուած ոտանաւորին հեղինակը պիտի ստանայ՝ իբրեւ մրցանակ

Ո Ս Կ Ի Գ Ր Ի Չ Մ Ը

Մասիսի մէջ հրատարակուելով միանգամայն իր բանաստեղծութիւնը՝ իր իսկական ստորագրութեամբ :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ, ՄԱՍԻՍԻ

Յ. Գ. — Աւելորդ չենք համարիր քանի մը մանրամասնութիւններ յիշել՝ Մրցման մասնակցիլ ուղղորդուող գիւրութեանը համար : — Ղրկուելիք համակները *recommandée* (յանձնարարեալ) ընելու պէտք չիկայ, որոնք աւելորդ յոգնութիւն ու ձեւակերպութիւն կը պատճառեն : — Պահարանին վրայ կը բաւէ գրել Մասիսի սովորական հասցէն

Խմբագրութիւն «Մասիս»ի

Կալաքա, Կ. Պոլիս.

մէկ եզերքը նշանակելով միայն «Ոտանաւորի մրցումին համար», ուրիշ ոչինչ : — Յատկապէս կը խնդրենք Մրցման համար ոտանաւոր զրկողներէն որ բացատրական համակներ չընկերացնեն անոնց, ինչպէս պատահեցաւ Նորալէպի Մրցումին ժամանակ :

ՄԱՍԻՍԻ յաջորդ և վաղաջաջորդ թիւերով հրատարակելի յօդուածներուն մէջէն կրնանք յիշել հիմակուց, ՕՐ. ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ սրամիտ պատասխանը Քրիզանթէմի Հայու Կնիկ գրուածքին, և ԳՐ. ՄԱԼԽՍԻ Փողոցի լեզու վերնագիրը կրող շահեկան մէկ տեսութիւնը, — բաց ի Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆԻ ու ՄԷՐՍԷՏԷՍԻ շարունակական յօդուածներէն : Աւանդալիկ մը՝ ծանօթ գրագէտէ մը որ ԶԷՐ—Ա—ՍԻՄ ծածկանունը կը կրէ : Բանաստեղծութիւն, Օրուան կեանքի Նօթեր, Օտար Դրականութիւն կամ Գեղարուեստ պիտի ունենան նոյնպէս իրենց տեղերը, թերթին ծաւալին ներած չափով, որ աւելի ընդարձակօրէն տրամադրելի պիտի դառնայ Անտրէ Թէօրիէի վէպին աւարտումէն ետքը :

ԽԱՆՆԱԿ ԶԱՆԳԵՐ

ՔՐԻՉԱՆԹԻՍԻՆ

Մտիդ միտ վառ վայրաւարժին երբ կը ձայնես դու en route !
Նա բերե մեզ բեռն համ . . . արձակ, չարանքնի բառերուդ,
Եւ գրուածքներդ ոյց սակ պառկին անունդ կազմող տառեր ուր,
Լըզուրոսուելով լափեն ամէ՛նքն ինչպէս զըլաֆ՝ arrow root :

Մասնեռադ մեջ տարծես զքրիչդ ինչպէս մեկ queue . . . de billard ,
Որուն ծայրէն caramboleող սրամտութիւն քափի յար,
Եւ շուշանի նրման շիկնող աղջկանց հայրեր, ծածկաբար,
Փըրանսերէն բառախաղով կ'անուանեն քեզ ah ! l'pillard !

Յօդուածներուդ մեջ ոսոսող շեշ մ'ունիս, քա՛ւմ ու ժիր հոն,
Նիւրդ ե . . . Լուիդ Իսխանունին, իսկ զքրիչդ ալ . . . Մ. Ժիւօն.
Տեղապաւնե՛ր գոց կ'ընեն միտ անեքոսներդ անմիւտօն,
Դըժոխքին մեջ ալ քեզ զովեն Տեա՛րք Ռապրէ եւ Piron .

Հրաւարաւ կարկառներու սիրաբարբառ parasite ,
Նըկարագրե՛ պերն հորիզոն, քաւուս ծորձոր, ձոր կամ site ,
Թրքաւոցուր միտ՝ քիչ մ'անառակ amateurի Ֆանքեղիդ ,
Քանի որ դու պարտաւոր չես օր մը հաշիւ տալ . . . փեսիդ :

Դրականութիւն մ'ունինք այսօր, vaine, insipide, incertaine ,
Ուր տարամին ու լուռին մեջ հուն եւ անհուն կը բարդեն .
Կասակ, ծիծաղ, զըւարթութիւն կեանքին համը չե՛ն արդէն,
Ինչպէս ըսած ե . . . Ալիապան—հակառակն ալ չըսե՛ր Taine !


Խայրող, խածնող, արիւնո՛ղ ալ փուռն եղիւր դու քով վարդին,
Խիզախ պատմիչ եւ հոգեբան chicին, chouetteին, smartին,
Առանց երբեք տեսելու որ պարոն Արսաւ կամ Արքին
Քովըզ քիմե անկլանելի, անմարտելի՝ մի tartine ! . .

Մեզ սեղանի հըրաւիրող «Մամուլ»ն ըլլայ քե «Մասիս»
Ամենքս անյագ ուտել կուզենք քու մանանեխդ ու saucisse . . .
Եւ շիկիքը, հարպի զանգուած, քովն երբ կամաց դու խօսիս .
Զի՛ հարցունե՛ր քե՛ քանի՞ վանք ու քանարներ կան ի Սիւս . . . :

Սիրոյ դասին պատգամութեան ընտրած ես մի grisant thème
Որ կրնայ շատ չի հաճելի խոսաբարոյ Բիւզանդէ մ՝
Իսկ որոնց դու հոգի՛ կուտաս, գիտես, on te prise, on t'aime !
Զառամներուն մեջ խուռներամ, կա՛ց անբառամ, Քրիզանթե՛մ :

ԱԼՓԾ ՍԼՍՆ

ՀԻՆ ԴԵՍՔԵՐ



ՊՕՂՈՍ ՊԱՐԻԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԱԴՐԻԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՅԻ



Հի՛ն ու մե՛ծ դէմք մը, որ 18րդ դարուն կէսերէն կը ձգի մինչև 19րդին կէսը՝ ծնած ըլլալով Ադրիանուպոլսի մէջ 1763ին ոչ-ան-նշան տոհմէ (*) :

Գրեթէ ոչինչ գիտենք իր պատմութեան ու երիտասարդութեան վրայ, և արդէն՝ իր կատարելութեան դործունէութիւններն այն-քան ամո՛ւր առա՛ւ ու փառաւոր են՝ որ եթէ քիչ շատ բան մը գիտցած ըլլայինք ալ իր սկզբնական խլրրամանց վրայ՝ շատ նսեմ յիշատակութիւն մը պիտի ըլլային ասոնք ա-նոնց քով :

Թուի 1785ի ատենները երուսաղէմ դնա-լով՝ միաբան եղած ու Եւգոկիացի Պետրոս Պատրիարքէն ձեռնադրուած է վարդապետ . ապա՝ հակառակ այդ աւանդական վանքին կանոնախնդիր յամբեցմանց՝ չո՛ւտ չո՛ւտ յա-ռաջ գացած է հոն իր Ժրութեամբը, ծանրու-թեամբն և հանճարեղ ուսումնասիրութեամբ՝ իբրև վարդապետ, իբրև խորհրդական, իբրև քաջ քարոզիչ : Պետրոս Պատրիարքի վախ-ճանէն ետք՝ 1801ին Կոստանդնուպոլսի և շրջակայ քաղաքները դացած է ի նպատա-հաւարութիւն : 1805ին դարձած է երուսաղէմ . ապա նորէն Պոլսի եկած և անկէ նուիրակ դացած է ի վիճակն Զմիւռնայի : Իբրև Ժիր ու անաչառ մարդ՝ իր համբաւը շատ աճած է Թուրքահայ այդ մեծ քաղաքներուն մէջ . իսկ իբրև պերճախօս ու աստուածաբան քարոզիչ՝ Կ. Պոլսի հայ մեծամեծներուն և Ժողովրդեան մէջ վայելած է վառ անուն մը :

(*) Ադրիանուպոլսի և Պրուսա՝ Կ. Պոլսի մէն ետք՝ տուած են վերջին երկու դարերու ամէնէն նշանաւոր եկեղեցականները՝ իբր աջ ու ձախ թեւերը Կ. Պոլսի : Մանաւանդ հին Ադրիանուպոլսի մէջ կային նշանաւոր տոհ-մեր :

Ժամանակակից Պօղոս Գարագոչ եպիսկոպոսին և իրեն այդ պերճախօս աստուածաբանու-թեան հոգեբանական պատճառներէն մին ալ կը համարուի իրենց անուանակցութիւնը Պօ-ղոս Առաքելոյն, զոր այդ երկու հին կրօնի դէմքերն ընտրած էին իրենց սրբազան ա-ռաջնորդ՝ ի վարս, ի բանս, ի դործս : Հա-տակին միջակութեան հակառակ՝ իր փառա-հեղ դէմքն և արծուունդն լրջութիւնը, խը-րոխտ ձայնն ու քաջ հայերէնագիրտութիւնը՝ ազդու և գոչաւորագոյն կը հանդիսադրէին իր բեմբասացութիւններն հազարաւոր Ժողո-վրդեան առջև, որ մայրաքաղաքին ու իր ծնած քաղաքին չորս կողմերէն կը դիմէին ի լուր : Այդ օրերէն տրուած են իրեն՝ հին օրերու պատուադրական գիճական և ասս-ուածաբան մակդիրները :

1809ին՝ վախճանեալ Յակոբ եպիսկոպոսի տեղ զինքն յիշատակուած կը դնենք իբրև փոխանորդ Պատրիարքութեանն երուսաղէմի ի Կ. Պոլսի, և 1811ին՝ երուսաղէմի Յունաց և Հայոց վանքերուն միջև կարեւոր դատի մը առիթով իբրև դործօն դերակատար մը և դատասաց մը անդամ :

1814ին՝ Կ. Պոլսի ազդեցիկ Հայերէն ու մեծատուններէն կարեւոր մաս մը դժտելով Գոլեան Աբրահամ Պատրիարքի հետ՝ տալա-դրեալ Շարականի մը նորօրինակ սրբազրու-թեան պատճառով, խորհրդակցութեամբ էջ-միւսին զրկեցին զՊօղոս վարդապետս Գրի-գորեան, Կ. Պոլսի նախորդ Յովհաննէս Պատրիարքին կնքով և իր համախոհներուն վկայական թուղթովը . քանի մը ամիսէն եւ պիսկոպոս՝ դարձաւ նորէն Կ. Պոլսի, և 1815 դեկտ. 3ին Պատրիարք ընտրուեցաւ : Իր առաջին համառօտ (*) քարոզը տուա-

(*) Ծնամեայ . Ադրիանուպոլսեցի ծերունի աղնուական-մեծատուն Պարտիզպանեան Ա-ւետիս Էֆէնտի՝ իր ալեբէկ անկողինին մէ-ջէն Պօղոս Պատրիարքի վրայ վաւերական վէպերով ու գովեստներով պատմած է մեզի թէ իր հօր մահուն անիթով մտերմական միսիթարադիր մըն ալ դրած է իրեն, յորում մէկ ու կէս սուղ տողի մէջ ամփոփած է սփոփարար փիլիսոփայութիւն մը համառօտ :

Մայր Եկեղեցւոյ մէջ անհամար բազմութեան մը առջեւ՝ գեղեցիկ ու խոնարհ ոճով և սէր ու խաղաղութիւն խոստանալով : Աստուածաբանական և միաւորչական խնդիրներու ամէնէն ջերմ առեւնն էր՝ որ կողջունէր նորընտիր Պատրիարքը : Աստուածաբան պատուելիներ, դաւիթներ, վարդապետներ, մատենագէտներ ու մեծատուններ՝ լուսաւորչական և հռոմէական Հայերուն կրօնային խարուստեանց հարցովը կը զբաղէին ժողովներով, քարոզներով, խորհրդակցութիւններով և անհատնում մեկնաբանութիւններով, որ կուտան միջինդարեան բազմերեւոյթ գոյն մը 1800էն մինչեւ 1830 Պոլսահայ տոհմայիններուն կրօնային գործունէութեանց :

Եւ զի հատու, խմաստուն, հաշտարար անձնաւորութիւն մըն էր ինք Պօղոս Պատրիարք՝ միանգամայն աստուածաբանական նրբին խաւերուն ջերմութեան ներմտացեալ մը, կարգի դնելէ ետեւ մէկ երկու տարուան մէջ Երուսաղէմի և Կ. Պոլիսի Պատրիարքներուն թագիկ գործերը՝ օգտուելով հայ մեծամեծներու և հռոմէական հայ երեւելիներու հաշտ վերաբերումներէն ու քանի մը հաշտողի Միթրիարեաններու ի Կ. Պոլիս ներկայութենէն՝ ձեռնարկեց գէթ նախ բերել աստուածաբանական կամ տեսական մերձեցման մը՝ հատուածեալ արեւմտեան փոքրամասնութիւնը արեւելեան (կամ Լուսաւորչական) մեծամասնութեան հետ : Մանաւանդ Հ. Միքայէլ Չամչեանի ու Հ. Մեսրոպ Աղաջըրաղեանի ի Կ. Պոլիս ներկայութիւնը քայլ մը աւելի կը մօտեցունէր այս աշխատութիւնը : Այսպիսի յառաջաբան տրամադրութիւններով ու երեք ամիս երկուստեք բանակցութիւններով գրի առին վերջապէս թուղթ մը, ու Պօղոս Պատրիարքին, Կիլիկիոյ Տէր Կիրակոս Կաթողիկոսին, վարդապետներու, քահանաներու, երեւելի անձնաւորու-

մէնք ալ մեր աչքով տեսած ենք Երուսաղէմի՝ և Զմիւռնացի Յովհ. Պատրիարքի վրայ իր քանի մը նամակները, որ՝ կարեւորներով ակադէմիկ ու թը տասը տողը չեն անցնիր :

Թեանց և արհեստագետներու հաւանութեամբ ընդունեցան այդ գիրն որ ապա տպագրուեցաւ ալ Հրաւեր սիրոյ (*) անուանով և որուն գլխաւոր ոգին ու խմբագիրն էր ինք Պօղոս Պատրիարքը : Բայց քիչ ետքը՝ քանի մը երկրորդական փոփոխութեանց և յաւելուածներու պատճառով այդ սիրոյն գործնականը չհասաւ իր կատարումին՝ թէպէտ և 1820 մարտ 29ին՝ աւագ հինգշաբթի օրուան ցերեկուան պատարագին մէջ յիշատակութենէ դադրեցան Յովհաննու Որոսնեցւոյ, Գրիգորի և Մովսիսի Տաթեւացեաց անունները, որ միջին դարու գլխաւոր հռոմէնագէտ վարդապետներն էին :

Պօղոս Պատրիարք այնուհետեւ սկսաւ զբաղիլ Պոլիսի Պատրիարքարանին վարչական գործերով և Երուսաղէմի Աթոռին հաշուեյարդարութեան խնդիրներով, որուն համար ինք իսկ խմբագրեց զբարար նշանաւոր Կանոնագրութիւն մը 16 յօդուած (Տե՛ս «Ժամանակագրութիւն Երուսաղէմի») հատոր Բ. էջ 376-384). Ժողով մըն ալ գումարելով՝ ընտրել տուաւ հոն Վանքին բարեկարգութեան համար եօթը խորհրդականներ որոնք կանոնագիրն առնելով ելան դային Երուսաղէմ և միաբաններուն հետ առժամեայ կարգադրութեան մը լծեցին ներքին իրաց վիճակը : Վանքը ընկճուած էր մեծ պարտքերու ներքեւ. և Պօղոս Պատրիարք՝ իբրեւ միաբան՝ դառնապէս կը լսէր հեռուէն այդ տխուր լուրերը և կ'ողջէր ընդօրոյթ հասնիլ իր Երուսաղէմին ալ :

Յ. Գ. ՄՐՄԵՐՍԱՆ

(Մնացեալը յաջորդով)

(*) Ետքերը՝ Պօղոս պէյ Տատեան Ֆրանսերէնի թարգմանել տալով այս միաբանագիրը՝ տպել տուաւ և 1885 յունիս 25ին ներկայացուց Փարիզի հանգուցեալ Տէր Սիպար արքեպիսկոպոսին : Յովհ. Տէրոյնց ալ անկէ թուրքերէնի թարգմանելով՝ տպեց իր Զօհալին մէջ : Մենք Սիլւստար Ս. Խաչի նշանաւոր աւագերէց Տէր Յովհաննէս Փափագեանի տունը տեսած ենք, սակայն, աւելի հին և ժամանակակից ձեռագիր մը հայերէն թուրքերէն :

«ՄԵՋ ԱԼ ՄԻ ՄՈՌՆԱՐ»

Կ : Պոլսոյ մէջ վերջերս կազմակերպուած թատերական ներկայացումներու լուրերը, — որոնց կը խառնուին Գոհարիկի, Չափրաստճեանի անունները, — վերկենդանութիւն մը կու տան բեմական գրեթէ մոլեցուած յիշատակներու և այս այժմէութիւնը՝ պատճառ կ'ըլլայ որ մեր աչքին առջև իբրեւնք այն վիճակը ուր գտնուած են և կամ կը գըտնուին մեր դերասանները :

Այդ մարդոց կեանքը, դառն որքան կարելի է երեւակայել, իր համակրելի կողմերն ունի և միշտ գործովով լեցուն վերաբերում մը կ'ունենանք ամէն անոնց հանդէպ՝ որոնք փայլերը եղան մեր թատերական հորիզոնին :

Տարաբազդ սիրահարներու պէս՝ երազի մը ետեւէն վազած են անոնք միշտ և իրենց ցաւովը սնած . առանց գանգատի յարատեւած են շաւղի մը մէջ որուն ծայրը հիւանդանոցը կամ գերեզմանը դտած են ամենքն ալ, անհշան մէկ քանի բացառութիւններով :

Վհատիկ չգիտցող յարատեւութեան ոգիով մը միշտ ճակատ ճակտի կուռած են այն ամէն նիւթական դժուարութեանց դէմ որոնք կեանքի փուշերը կը կազմեն : Անթութիւնը իրենց էն մտերիմ բարեկամը եղած է և վաղուան ապրուստի մտահոգութիւնը՝ իրենց էն մեծ թշնամին :

Յաւիտեանական տոյժ bohémienները, զմայլում ազդող համակերպութեամբ մը, թող տուած են անշուկ՝ որ բաղդը իր կռնակը միայն ցցունէ իրենց . սակայն միշտ փարած մնացած են անոնք իրենց խոէպլին, չեն ուղած տեղի տալ, տոկալու արհեստը գոյ ըրած են և ապրելու երանութիւնը զարնուած ծափերու մէջ փնտռելու աժան փխրատիայութիւնը ընդդրկած են յաւէտ :

Հայ դերասանը տիպար մըն է որ միշտ յարգանք ազդած է ինծի, անոր համար որ քաջութիւնը ունեցած է կամովին գամուած մնալու բեմին տախտակներուն վրայ՝ սպասելով յաջողութեան մը որ չի գար և գալուն վրայ ալ հաւատք չունի :

Ջրաւորութիւնը, պարտքերը, զրկանքները, անորոշ ապագայի մը ազդած մտահոգութիւնը, այս ամէնը չեն տոկացներ զինքը, սա համոզումով որ, ինքը չէ որ կը թերանայ, այլ արուեստն է որ այսպէս կը սրահանջէ . և այս ամէնուն մէջ եթէ յանցաւոր մը կայ ա՛ն ալ հասարակութիւնն է, — կը մտածեն իրենք, — չստ սնդամ իրաւամբ :

Արուեստին հուրը կ'այրէ, կը մրկէ այդ սիրտերը, կը թոռմեցնէ ուղեղները և ասոր համար երբեք պատախաճատու չեմ բռներ ես զիրենք, եթէ երբեմն մեծ անհոգութիւն մը ցոյց կու տան իրենց արուեստագէտի պարտականութեանց հանդէպ :

Մաղթելով որ նիւթական լաւագոյն վիճակ մը ունենան այսուհետեւ մեր դերասանները եւ հանգիստ անկիւն մը գրաւեն երկնից կամարին տակ, մէկ երկու անէք թօռներ ունիմ պատմելիք դերասանական կեանքէ, բոլորովին անտիպ՝ բայց ոչ յերկրուած :

Հայ դերասանները, որոնց շատերը մօտէն ճանչցած եմ, անշուշտ ներողամիտ պիտի ըլլան ինծի՝ եթէ իրենց ներքին կեանքէն առնուած փոքրիկ անդադանապահութիւն մը մէջ տեղ հանելու փորձութեան չեմ գիտահար . յետոյ, հրապարակագրութեան ու դերասանութեան մէջ այնքան մօտ խնամութիւն մը կայ, որ մէկ ընտանիքի անդամներու պէս, մեր յանցանքները և կամ մեր պակասութիւնները իրարու երեսի կրնանք տալ առանց քաշուելու :

* * *

Գազանիք մը չէ անշուշտ ոչ ոքի համար եթէ ըսեմ որ մեր դերասանները բեմը ոտք կոխած օրերնէն սկսեալ միշտ դատարկ գըրպան մը ունեցած են . — խեղճերը միլիոններ չէ որ կը վասակին :

Թրեանց, ամստամալին Թրեանց, մեր կատակերգակներուն ափնէն ջոջը, պատմութիւն մը ըրած է ինծի որ ժամերով խնդացուցած է զիս :

— Օր մը, կը պատմէր, անմիջական պէտք մը ունեցայ դրամի : Ամիսներէ ի վեր ներկայացուած տուած չունէինք, բայց տանտէրս սա պարագան չէր հասկնար : Բան մը ընելու

էր վերջապէս: Իբրեւ հարստութիւն՝ գրպանիս ոսկի ժամացոյցը ունէի միայն, աղուոր remontoire մը զոր Թիֆլիզի մէջ ընծայ առած էի պէնեֆիսիս գիշերը: Անուանս սկզբնատառերը կային վրան Դ. և Թ. «Դաւիթ Թրեանց»․ քսան ոսկի կ'արժէր: Հինգ ոսկիի փոխարէն աւանդ ձգել ուզեցի իմ ծանօթ ներէս հայ սարաֆի մը քով:

Ամէն պարկեշտ վաշխառուի պէս՝ հազար գծուարութիւններ ցոյց տուաւ այդ փոքրիկ փոխատուութիւնը ընկել համար: Նախ ժամացոյցին չի հաւնեցաւ․ պայմանաժամը երկար գտաւ և տոկոսը կարծ: Հոս դարձաւ, հոն դարձաւ, վերջապէս բան մը գտաւ ըսելու՝ այդ ուզած դրամս չի տալու համար: Ամէն բան աչքս առած էի․ պայմանաժամը պղտիկցուցի և տոկոսը մեծցուցի, սա ալ չեղաւ: Ներսիզիէն չէր գար կոր, ինչ գիտնամ:

Յանկարծ, գլխուն ետեւի կողմը քերելով․
—Միւսի՛ւ Թրեանց, քեզի բացէ ի բաց բան մը ըսեմ, ըսաւ սարաֆս, սա գործը չպիտի ըլլայ:

—Պատճա՞ռ:

—Պէլալը բան է, էֆէնտիմ:

—Սա պէլան ինծի ալ չի հասկցնու:

—Ի՞նչ բացէ ի բաց ըսեմ. դուք, աղբար, քեաքոնի մարդիկ էք, այսօր կաք՝ վաղը չի կաք. խօսալով պարտքերնիդ ալ չէք վճարեր, դնա եկուր, մինչև ե՞րբ պիտի ըս պատեմ, Փայիզը նա՞սըլ պիտի ընենք:

—Պե, ճանրմ, կ'ըսեմ կուսա-դէուխին, եթէ երեք ամիսէն տոկոսովը մէկտեղ պարտքըս չի վճարեմ, սահաքը քեզի ըլլայ:

—Ատ խօսալ է, բայց առ բանը գործիս չի դար:

—Ինչո՞ւ:

—Ճանրմ, սա սահաթը հիշ մէկը չառներ, վրան գիր կայ:

—Ուրիշ չառնէ նէ դուն խուլլանմի՞ս եղիր, հէլա՛լ ըլլայ:

—Ատ միտքէս անցաւ ամմա, սա Դ. և Թ. գիրերը անունիս յարմար չեն գար կոր: Ա՛ն, ախպար, սա սահաթըդ:

Եւ ժամացոյցը արիս մէջ դրաւ:

Բարկութենէս պիտի ճաթէի:

Անգամ մը գիրերուն վրայ նայեցայ և վաշխառուիս դառնալով՝

—Հաճի՛ աղա, ուզես նէ սա գիրերը անունիդ կրնաս յարմարցնել,

—Ատ նա՞սըլ կ'ըլլայ:

—Խօսալ ե, գաքր առ Դ. և Թ. գիրերը կան, առջեւը Բ մը դնել կուտաս, կ'ըլլայ Բ. Դ. Թ.:

—Կեցցե՛ս Դրեանց, ըսի ձեռքը սեղմելով սրամիտ դերասանին:

* * *

Հիմայ ուրիշ պատմութիւն մը:

Ասկէ երեք տարի առաջ, մեր դերասաննայեաներէն եթէ ոչ ամենէն մեծը՝ բայց գոնէ ամենէն բարձրահասակը Աղեքսանդրիոյ մէջ թատերական ներկայացում մը պիտի տար մեծաւ պատասխանքեամբ:

Բայց այդ երեկոյթը կազմակերպելու համար գոնէ ամիս մը առաջ գործի սկսելու էր: Խեղճ մարդը օթել մը իջեւանած էր, à marquer դրութեամբ:

Եւ պատահեցաւ ինչ որ պիտի պատահէր. պանդոկապետը տեսնելով որ երկու-երեք շաբաթներ կ'անցնին առանց վճարումի, կը խնդրէ մեր դերասանապետէն որ լաւագոյն օթել մը ընտրէ, որովհետեւ իր վարձած սենեակին պէտք ունէր:

Եւ իր բարեկամութեան իբրեւ ապացոյց՝ խեղճ մարդուն անտուկը վար կը դնէ, առանկ յիշատակ մը չի մոռնալու համար:

Մարդը կը ստիպուի տեղափոխուիլ. արդէն ներկայացումը շաբաթ գիշեր պիտի տրուէր, ինչպէս որ ալ ըլլար հետեւեալ օրը կրնար անտուկը ազատել:

Խաղցուած խաղն էր Բըրմըզը ձրգսան անուն հին տուամ մը:

Երկրորդ կամ երրորդ արարուածին է, չեմ յիշեր, նաւապետը հետեւեալ խօսքերը կ'ուղղէ իր աղջիկը մահուընէ ազատող երիտասարդին.

—Օղլո՛ւմ, պէն սէնտէն չօք մէմնուն գալտըմ, Ալլահըն իզնի իլէ, քէրիմէմ ղէվ-ճէնիդ օլաճաք տըր: Պէն էյլիլլէրի թահրիմ, դըղըմըն էօմըիւ սիղէ պօրճուլում, վէ նա-

սըլ քի կէօրտիւնիդ՝ պէն պօրծլարըմը վէրէն
ատամկարտան ըմ . . .

— «Պիղի տէ ունութեա՛» չի պուսայ վա-
րէն սղանդովկայեալը :

Խնդալէն մարեցանք :

— Այլա՛ք, գոռաց վերէն մեր դերասա-
նապետը, դէմքը ձայնին եկած կողմը դարձը-
նելով :

Ատկէ աւելի սիրուն կերպով չէր կրնար
պատասխանել այդքան դռնիկ կերպով իրեն
ուղղուած forget me not/ին :

ԳՐԻԶՍԵԹԷՍ

ԲԺԻՅԿԸ ու ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Այս օրերուս՝ մեր օրաթերթերուն մէջ հրա-
տարակուսեցան քանի մը յօդուածներ, որոնք
անխնայ եւ քիչ մըն ալ անխնամ յարձակում-
ներ կը պարունակէին սա՛՝ կամ նա՛ բժիշկին
դէմ մասնաւորապէս, եւ անոնցմէ անդին
անցնելով՝ բժիշկներուն դէմ ընդհանրապէս :
Ատենը մէյ մը՝ բժիշկի մը կամ բժիշկնե-
րու դէմ կը դրուին բաներ մը, որոնց սա-
կայն, քիչ անդամ հրապարակային հերքում
մը տալու պէտք կը տեսնանք՝ մինք բժիշկ-
ներու, քանզի երբ խնդիրը գիտական—բժշկ-
կական կէտի մը չուրջը կը դառնայ՝ այդ
մասին հանրութեան խօսք հասկըցնել փոր-
ձելը պարտաւ աշխատանք է պարզապէս :

Ինչ մը վերը ակնարկած յօդուածներէս
մէկովը, զոր օրինակ, դաւառացի համակրելի
թղթակից մը կը պատմէ թէ՛՝ վերջերս զըմ-
բաղդութիւնն ունեցեր է կորնայնել իր գե-
ւատի քոյրը, զոր կը դարմանէ եղեր դաւա-
ռարեակ բժիշկ մը : Այդ թղթակիցը սակայն,
անանկ համադուր է թէ՛ իր սղրացեալ քոյրը
սխալ դարմանուեր է բժիշկին կողմէ . թէ՛
քոյրը հիւանդութիւնը այսինչ բանն է եղեր
եւ ո՛չ՝ այսինչը : Ուստի, զայն դարմանող
աշէտ (°) բժիշկը սպաննած կ'ըլլայ իր քոյրը :
Թուղթի վրայ՝ ա՛յս է հարկաւ արուած եզ-
րերէն հանուելիք հետեւութիւնը : Իրականին
մէջ, սակայն, խնդիրը կրնայ ըստօրովին
տարբեր իւրն մը ըլլալ : Աւանց մանրամաս

թիւններու մանկու՝ կրնայ՝ օրինակի համար
հարցուիլ թէ՛ ո՞վ վճուեր է թէ՛ սխալ էր
դարմանող բժիշկին անտաճանաչումը . եթէ
— ի՛նչ որ երբեմն կը պատահի դժբաղդաւար—
կրկնորդ բժիշկ մը անաշխու անուանարկելու
համար կա՛մ նոյն իսկ կատարեալ անկեղծու-
թեամբ յայտնէր է այդ կարծիքը՝ տակաւին
առողջ ալ չի ըմբռնար խնդիրը . վերջին խօսքը
ըսելու իրաւունքը կը մնայ դիպրոսութեան,
ինչ որ յայտնի է թէ՛ չէ՛ կատարուած յիշուած
օրինակին մէջ, քանի որ բան չէր ըսուած
այդ մասին :

Դարձեալ, ընդունինք պահ մը թէ՛ այդ
դարմանող բժիշկը սխալ անուն մը տուած
ըլլայ հիւանդութեան մը . կը կարծուի՞ արդ-
եօք թէ՛ սխալ անուանակոչութեան մը երե-
սէն՝ ձախորդ հետեւանք մը կ'ունենայ ան-
պատճառ՝ հիւանդութիւն մը : Մասնաւոր թէ՛
ո՛ր եւ է բժիշկ կրնայ վստահեցնել մեր յար-
գելի թղթակիցը թէ՛ իր յիշած երկու հիւան-
դութիւններն իր կարծածին չափ անսման
չեն իրարու, ու նո՛յն սխալը — եթէ իրա՛ւ
սխալ մը կար խնդրին մէջ — կրնայ տեղի
ունենալ Պօլլաի, Վիէննայի, Բարիզի, Լոն-
տոնի, Նիւ—Եօքքի, ինչպէս եւ Սվալի մէջ :
Ու անի արհեստին բերումն է . արհեստաւորը
չէ՛՝ անչափ կամ զէթ ենթադրուածին չափ
պատասխանատուն : Բա՛ւ լիցի որ այս խօս-
քերովս միտք ունենամ ո՛ր եւ է՝ կերպով ու
չափով քաջալերել բժշկական անդգոյշ քըն-
նութիւնները, յախուռն զործողութիւնները՝
բժիշկներուն եւ վիրաբոյժներուն : Ըսել կ'ու-
զեմ միայն թէ խղճամիտ բժիշկը՝ իր պարտ-
քը, իր արհեստը զործադրելէ անդին՝ դա-
լիք, ծագելիք հետեւութիւններուն իրաւունք
ունի ակնիջ չի կախել :

Սխալ անտաճանաչութեան եւ սխալ դար-
մանումի վրայ խօսած ատենիս՝ անդն է որ
մասնանշենք ժողովուրդին սա՛՝ անտեղի
կարծիքը ընդհանրապէս, թէ՛՝ դաւառարեակ
բժիշկին ըսածներն ու ըրածները չեն կրնար
այնքան արժէք ու կարեւորութիւն ունենալ
ինչքան Պոլլաի բժիշկներունը : Այս ժողովրդա-
յին ապուշ համոզումին դէմ դժբաւորապէս
կը բողոքեն դաւառարեակ բժիշկները, որոնք

եթէ այսօր այսինչ կամ այնինչ գաւառները կը գտնուին՝ վաղն ալ կրնան Պօլիս հաստատուիլ, — եթէ այդ պարագան ինքնին աւելի հեղինակաւոր կրնայ ընել զիրենք: Գաւառաբնակ բժիշկներուն սրտի է՛ն մեծ ցաւն է արդարեւ տեսնել որ իրենց մէկ հիւանդը Պօլիս կ'երթայ մասնաւոր դարմանի համար, եւ մայրաքաղաքի է՛ն աննշան մէկ բժիշկին գեղազօրները դրպանած՝ տուն կը վերադառնայ, նախատելու համար զինքը դարմանող քաղաքակից բժիշկը: Պօլսական բժիշկի մը ցցուցած է ինքզինքը, ու ա՛լ դո՛ւ է խեղճ մարդը, ու կը հաւատայ թէ Պօլսիւնը անհոն նազէս գերադանց վարպետ մէկն ըլլալու է անկատար, քանի որ մեծ քաղաքի բժիշկ է: Ասոնք չեմ ըսեր հարկաւ ինչ եւ իցէ կերպով՝ մայրաքաղաքի մեր յարգելի եղբայրս կիցներն անուանարկելու կամ անոնց հմտութիւնը ու ճարտարութիւնը խնդրի տակ ձգելու համար: Գաւառաբնակ բժիշկին ինքնապաշտօնութիւնը սակայն ընել կ'ուզեմ, որպէս թէ Պօլսէ դուրս ալ կան ու կը գտնուին բժիշկներ, ու ողէտ ժողովուրդը զխնայու է թէ մա՛րցն է արհեստաւորը եւ ո՛չ թէ տեղը:

Ժողովուրդին այս անխորհուրդ վերաբերումին մէջ պէ՛տք է վնասել քայտարութիւնը թէ ինչո՞ւ մեր բժիշկները կը փախչին գաւառներէն ու կը խոնուին մայրաքաղաքին մէջ: Վստահ եղի՛ք թէ՛ Պօլսի մեր է՛ն համբաւաւոր բժիշկն ալ եթէ այսօր սա՛նկ գաւառային անկիւն մը երթալու ըլլայ՝ վաղն խակ պիտի կորսնցնէ իր անունը, եւ ժողովուրդը պիտի նկատէ զանի առի՛կ գաւառային սովորական — չըսելու համար աղէտ — բժիշկ մը: Իր գործէն՝ մարդը գատելու արամաբանութիւնը կը պարտի այս պարագային մէջ: Ու քանի որ այս պարագան է՛ վարժաբանէն նոր ելլող երիտասարդ բժիշկը թո՛ւն զոհողութիւն յանձն առնելով կը դաժմուի կը մնայ Պօլիս, որպէս զի վերջի վերջոյ հըռօ չափով՝ «Պօլսերնակ Տօքթօր ա՛յսինչ»: Մէկ կողմէն հաւաքը կ'ուզուի բժիշկներուն հաստատուիլ հեռաւոր գաւառներու մէջ, ու միւս կողմէն ալ՝ հոն հաստատուողներու եւ

իրենց արհեստն ի գործ դնողներու դէմ լրացարկան անտեղի սրայքար մը կը մղուի, երբ օրին մէկը հիւանդ մը չաղեկնայ կամ մեռնի անոնց ձեռքը:

Այս քանոր՝ արուեստին արժանիքին եւ արուեստաւորին՝ բժիշկին արժանապատուութեանը մասին:

Մենք բժիշկներս միշտ ամբաստանուած ենք իրրեւ արծաթասէր անձեր, ամբաստանուած ենք իրրեւ առանց վարձատրութեան կամ այցելադէնի տեղերնէս չի չարժող մարդեր: Այս կարգէն երկու օրինակներ վեր առնելէն վերջերս երկու յօդուածագիրներ ու բժիշկներուն անդուծ մարդիկ ըլլալը թերթերու մէջ հրատարակել էին, որուն շատ պէտք ալ չի կար, քանի որ արդէն սովորաբար զմեզ առանկ կը ճանչնայ հանրութիւնը: Եւ քանի որ տարածուած կարծիք մըն է ասի՛ մեզի բժիշկներու դէմ, ներելի է դարձեալ որ այդ մասին ալ ինքնապաշտօնութեան որդիի փորձ մը ըլլուի ամբաստանեալներուն կողմէ:

Ու հոս չուկայական պատճառաբանութեամբ կարելի պիտի ըլլայ ամենէն դիւրին խօսք հասկնցնել: — Ամենքս ալ կ'ընդունինք կարծեմ թէ ո՛չ ոք իրաւունք ունի առանց վարձատրութեան, առանց վճարումի գործ մը կամ ծառայութիւն մը պահանջել զիմացնէն: Միտքերնէս չանցնիր երբեք, զոր օրինակ, առանց տալ վարա տալու գաւաթ մը ջուր խմել ջրավաճառէն, անխելքութիւն պիտի ըլլար կարծել թէ բեռնակիր մը մեր ծրարը կունակը պիտի տունէր՝ առանց մեզմէ վարձք մը ոտակելու, խենդութիւն պիտի համարուէր առանց վճարումի նոյարաւաճառէն քաշ մը բրինձ ձեռք անցունելը: Ու ասոնք ամէնքը շատ պղտիկ վճարումով մը ըլլուելիք բաներ են, խոշոր անկարելութիւնները աւելի ակնհաս են անշուշտ:

Երբ սակայն խնդրը կուգայ բժիշկը աշխատցնելու, զոյն չի վարձատրելու, հո՛ւա է որ ընդունուած, անվիճելի իրաւունքները կրակածի տակ կ'իյնան: Երբ բժիշկ մը չի յօժարիր առանց այցելադէնի սա՛ կամ նա՛ հի-

ւանդին երթալ՝ ալ Աստուած հեռի ընէ՝ ա-
մէն լուսանք կը տեղացուի անոր գլխուն, և
անգութէն մեղմ որակում մը չի գտնուիր
բժիշկին այդ արարքին համար:

Ինչո՞ւ ուրիշ արհեստաւորներէ չազատուիր
ձրի ծառայութիւն, մինչ երբ բժիշկներուն
գայ կարգը՝ կը պահանջուի որ անոնք վա-
զեն, վազվաւտեն, յոգնին ու տքնին առանց
դրամական անկախութեան: Ես յետինը պի-
տի ըլլամ ըսող թէ՝ աղքատ հիւանդը առանց
բժշկական խնամքի ձգուելու է. կը պնդեմ
միայն թէ բժիշկն ալ ա՛յնքան իրաւունք
ունի իր այցելագինը պահանջելու ի՞նչքան
հայագործը որ առանց ստակը առնելու չերս
մըն հայ չի տար այդ նոյն աղքատ հիւանդին:

Ու այս մասին շատ սխալ է ասն տարա-
ծուած եւ նոյն իսկ թերթերու մէջ արձա-
գանգ գտած դադափարը թէ բժիշկներն՝
հիւանդի չեն երթար առանց իրենց այցելա-
գինին ծայրը տեսնելու: Պաւառային փոր-
ձառութեանս վրայ հիմնուելով ճակատաբաց
կը յայտարարեմ հոս թէ՝ ժողովուրդին է՛ն
արծաթապաշտ համարած բժիշկն իսկ իր ար-
դար իրաւունքին մէկ չորրորդը կը զո՛հէ կը
նուիրէ ժողովուրդին: Ու պիտի ուզէի դիտ-
նալ թէ բժշկութենէ դատ ո՞ր արհեստը ա՛յդ-
քան առատածնուն է իր յաճախորդներուն:
Ո՞ր արհեստաւորը կամ խանութպանը ար-
դեօք հարիւրին քսան կամ քսանհինգ եւ
նոյն իսկ աւելի զոհողութիւն մը կ'ընէ իր
յաճախորդներուն, իր արդար իրաւունքէն,
իր օրինաւոր եկամուտէն:

Շատ անգամ առիթը կը ներկայանայ բը-
ժիշկներուն՝ ձրիաբար դարմանել աղքատ հի-
ւանդներ, ա՛յս կամ ա՛յն գլխասիրո՞ւ (°) ա-
ղայի մը կամ բարեպաշտօն քահանայի մը
յանձնարարութեամբ: Ու երբ, սակայն, այդ
միջնորդի դեր կատարողներուն կը յանձնա-
րարուի քանի մը փարպիկ կաթ առնել հի-
ւանդին համար, կամ կէս օխտ միտ զրկել
հիւանդին տունը, ակնաջ կախող չի գըտ-
նուիր, եւ լրբօրէն կը սպասուի որ այդ ծախքն
ալ բժիշկը քաշէ իր գրպանէն, ու միջնորդը
կամ միջնորդներն հանդարտ խղճով տեղեր-
նին կ'երթան, քանզի կատարած կը հաւարին

իրենց պարտականութիւնը, բժիշկին զոհո-
ղութեամբը:

Առանց փողի ու թմրակի, ամէն բժիշկ
չարունակ բարեգործութիւն կը կատարէ, իր
իրաւունքը եղող այցելագինը չնորհելով աղ-
քատ հիւանդին: Բայց առի կարեւորութիւն
չունի ժողովուրդին համար. ասիկա բան մը
չի սեպուիր ժողովուրդը կ'ուզէ մակարու-
ծօրէն չահագործել բժիշկները:

ՏՈՔՔ. ՅՈՎՍ. Տ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՕՏԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԶՕԼԱԻ ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԸ

« VÉRITÉ »

Բնապաշտ Դպրոցին պետը երբոր մեռաւ՝
այնքան յանկարծական ու եղբական կեր-
պով, դեռ նոր աւարտած ու մամուլին յանձ-
նած էր երրորդ մասը—Vérité—իր այն եր-
կասիրութեան շարքին զոր «Չորս Աւետարան-
ներ» կ'անուանէր, առաջին երկուքը ըլլալով
Fécondité ու Travail, և որուն չորրորդը
ու վերջինը, Justice, իր հետ տարաւ գերեզ-
ման, դադափարային վիճակի մէջ:

Այդ երրորդ հատորը, ձեմարսութիւն,
լոյս տեսաւ այս օրերս Բարիզի մէջ, և օր-
ուան գրական—ընկերային նորութիւնը նկատ-
ուելէ վատ՝ անդրչիրմի արձագանդի մը տը-
պաւորութիւնը կը թողու, քանի որ ո՛չ ես է
հեղինակը, և այս տեսակէտով՝ նոյն իսկ Զօ-
լաի հակառակորդներն ու քննադատները ան-
սակ մը երկկեղածութեամբ ու ակնածանօք
կը խօսին այդ գրքին վրայ որ դատական
սխալի մը շուրջը կը դառնայ՝ կղերական
դատաւարակութեան դէմ ուղղուած քեզով մը:

Մասիսի «Օտար էջեր»ու գլուխին համար
աւելի այժմէութիւն ունեցող նիւթ մը չէինք
կրնար ընարել քան ներկայացնել Զօլաի այս
գործը որուն թարմ թերթերը դեռ նոր կը
կտրատեն նոյն իսկ Ֆրանսացի ընթերցողները:
Պիտի շատանանք, այս անդամուան համար,
նիւթը պատմելով ձեմարսութիւնին, դադա-

փար մը տալու համար անոր հիւսուածքին վրայ ուսկից ինքնին դուրս կը ցայտէ՝ արդէն գործին հոգեբանութիւնը :

Մայեռպուտ ընդարձակ աւանին մէջ ոճիր մը գործուած է . տասը տարեկան աղայ մը, փոքրիկ Զէֆիրինը, — «Յրիստոնէական Վարդապետութեան Փռէւններու» դպրոցին աշակերտ, — դիշեր ասեն խղզուած կը դանուի իր հօրեղբօրը՝ աշխարհական դատաւարակ Սիմօնի տանը մէջ : Դիակը երեւան հանուած տոնն գարշելի բռնաբարութեան մը հետքը կը կրէր ու դեռինը ձգուած էր թուղթէ խցան մը դուր գործածած ըլլալու էր մարդասպանը՝ իր զոհին աղաղակները ճնշելու համար : Այս խցանը կը բաղկանայ լրագրէ մը և գեղագրութեան օրինակէ մը : Օրինակին մէկ եզրը պատուած է, չգլխացուի որո՞ւ կողմէ, ու պատուած էջին տակը կիսատ կերպով կ'ընդշնարուին երկու *entre-lacés* սկզբնատուեր :

Ոճրագործը անյայտ կը մնայ :

Տղան՝ իր հօրեղբօրը յարկաբաժնին՝ տակ՝ գեանայարկի խուց մը կը բնակէր . արդեօք գիշերաշրջիկ չարագործ մը ներս ցատկած էր պատուհանէն որ յաջորդ առաւոյն տակաւին բաց կը մնար : Կատարուած քննութիւնը, այս կողմէն որ և է հաւանական հետք չի գտնուիր և վերջ ի վերջոյ կատկածները՝ զորս կրցածին չափ կը հրահրէ տեղւոյն կղերական կուսակցութիւնը՝ կը յառին դատաւարակին վրայ : Թեթեւ ենթադրութիւններ, չնչին զուգադիպութիւններ, չարամիտ բամբասանքներ խուլ կերպով կը միացուին այդ մարդուն դէմ զոր ամէն բանէ առաջ հանրային ցատման նշանակ ընող պարագան է՝ անոր Հրեայ ըլլալը : Արտաքուստ երկչոտ երեւոյթ մը ունի անիկա, իր ցեղին յատուկ լուռ խոնարհութիւնը, և յարմարադոյն տիպարն է, իր աւանին մէջ, նախազ քառութեան մը ըլլալու, իր անձովը վստահելու աշխարհական դատաւարակութիւնը, արգիւլելու մանաւանդ որ լուռ յանցաւորը այլուր չլինուուի : Հետեւաբար, Սիմօն վարժապետը՝ ոմանց կողմէ ակամարար հալածուած և ուրիշներու կողմէ դիտմաբէ և հաշիւով՝ եղեռնադատ ատեանին առջեւ պիտի հանուի :

Բայց իր մէկ պաշտօնակիցը, Մարք Ֆրօման, լուսաւորեալ և ուղղամիտ անձ մը, կը յամառի զայն անմեղ նկատել : Եւ արդարեւ, կը մտածէ, հաստատուած չէ թէ գեղագրութեան օրինակը աշխարհականներու դպրոցինը եղած ըլլայ փոխանակ անոր մրցակից դպրոցինը ըլլալու . թուղթին պատուած մասը ճիշդ այն անկիւնը կը կազմէ ուր Փռէւնները սովորաբար կը դնեն իրենց Հաստատութեան կնիքը : Օրին մէկը Մարք ձեռք պիտի ձգէ ասոր տպացոյցը, և որովհետեւ նախնական քննութենէն առաջ այդ տպացոյցական թուղթը պահ մը կրօնաւորի մը՝ Հ. Ֆիլիպէնի ձեռքը գտնուած է, Մարք նախազգացում մը կ'ունենայ թէ իբրեւ փաստ ծառայելիք աւարկան սննդացուցած է անիկայ : Եւ Սիմօնի արիւստիտ եղբօրը՝ Դաւիթի հետ միացած՝ կը սկսի պայքար մը մղել ամբաստանեալին ի նպաստ : Երկուքը մէկանց ի զուր կը դիմեն Պառնոն Նաթանի, հրէութենէ դարձած մեծահարուստ անձ մը որ իր բաղդը շինելէն ետքը կատաղի հակահրէական մը դարձած է . նոյն ցուրտ ընդաւնելութիւնը կը գտնեն քանի մը երեսփոխաններու քով որոնք աւելի հոգ կը տանին մօտաւոր ընտրութիւններուն, իրենց ժողովրդականութիւնը չի կորսնցնելու համար : Մինակ Տէլպօ անուն նշանաւոր փաստարանը ճշմարտութիւնը պաշտպանելու կը նուիրէ իր պարկեշտ մարդու զայրոյթը և իր պրիճախօսութիւնը : Բայց ասոնք ամէնքը անզօր կ'ըլլան արգիւլելու որ Սիմօն չընկճուի կեղծ վկայութիւններու և ցածոգի ամբաստանութիւններու տակ, ու չի դատապարտուի :

Գործը կը թաղուի, կը մոռցուի այս կերպով, թաքուն ցաւ մը, կրծող որդ մը դաւնայով սակայն մասնաւոր դատակարգի մը սրտին համար որ ներքնապէս կը տառապի գործուած անիրաւութիւնէն : Սիմօնին յաջորդելու հրաւիրուած է Մարք Ֆրէմօն որ կը ստանձնէ Մաքեդոնաի աշխարհական վարժարանին ուսուցչութիւնը եւ հոն կը հաստատուի իր կնոջը ու պղտիկ աղջկանը հետ : Այն տոնն ահա կը սկսի ընտանեկան սուամբ եւ վէճը կը սաստկանայ քրիտոստեայ կնոջը ու անհաւատ էրկանը միջեւ : Մոլեռանդ մօր մը աղքեցութեան տակ՝ Ժընըվիէյ Ֆրօ-

ման ատելի կը գտնէ իր ամուսնին փիլիսոփայական գաղափարները ու վարած կրթական գործը, եւ կը հեռանայ ամուսնական յարկէն: Այս ամէնը նկարագրուած է լայն գիծերով, պարզ՝ յստակ կերպով, ասկրուած կեանքի, քաջուած տառապանքի արտայայտութիւններով որոնք այնքան հզօր կը դառնան Զօլաի գրչին տակ:

Մարք առաջ կը տանի, սակայն, անվհատ իր կրկնակ գործը. իր անսպառ բարութեանը շնորհիւ տակաւ տակաւ սիրելին կը դառնայ իր աշակերտներուն՝ որոնց սիրտը կը գրաւէ ու հողին կ'առաջնորդէ ճշմարտութեան հետապնդումին. այնպէս որ, անոնցմէ մէկը, ուղղելով նախապէս յերկրուած սուտ մը, կը բացատրէ անոր թէ ուսկի՛ց աւնուած էր գեղագրութեան տետրակին էջը որ գտնուած էր խեղդամահ տղուն սենեակէն. համանման տետրակ մը երեւան կը հանուի՝ մեռելներու գարոյնին կնիքը կրող. այս յայտնութեան վրայ, նոր քննութիւններ ու խուզարկութիւններ կատարելու հարկը անխուսափելի կը դառնայ եւ Հ. Ֆիլիպպէնի թուղթերուն մէջէն կը գտնուի պատուած մասը զոր անխոհեմաբար պահած էր՝ ի հարկին վախ ազդելու համար իր չարաչառք պաշտպանեակին, եղբայր ժօրժիաւի, որ հիմայ կը ճանչցուի իրբեւ ըուն մարդասպանը: Եւ դատին վերաքննութիւնը անհրաժեշտ կը դառնայ: Մարք Ֆրօման որ ինքն է գործը այս կէտին հասցնողը, կը հալածուի, կը ստախարակուի, իր տապալէզին ու իր ներքին կեանքին մէջ միանգամայն նախատուելով, բայց անդրդուելի կը մնայ, վասն զի իր պարտքը կատարած ըլլալու գոհացումը ունի. իր աչքին վարժապետ Սիմօնի գործը լայն համեմատութիւններ կը ստանայ, եւ սխալմամբ դատաւարտուած խեղճ մարդու մը խնդիրը չէ այլ եւս. անոր արձակումը՝ Ֆրանսացի ժողովուրդին մէկ նոր քայլը պիտի ըլլայ բարեփոխութեան ու արժանապատուութեան ճամբուն մէջ:

Վերջապէս, Վճռաբեկ ատեանին մէկ որոշումովը, նախորդ վճիռը կը բեկանուի եւ դատը կը յանձնուի ուրիշ ատեանի մը վերաքննութեան որ աքոսրավայրէն բերել կու-

տայ դատաւարտեալը: Հոս՝ հեղինակը կենդանի գոյներով կը նկարագրէ թիարանէն վերադարձող մարդը, ընկճուած, կորաքամակ, ապուշ մը գրեթէ, որուն այդ երեւոյթը կը ծառայէ իր հակառակորդներուն էնդրիկնութեան եւ ձեռք բերել կուտայ վճիռ մը զոր ներման խնդրանք մը ուժաթափ կ'ընէ:

Ինչպէս կը տեսնէք, մէկէ աւելի հանգիտութիւններ ու նմանողութեան կէտեր կան այս վէպին եւ Տրէյֆիւսի գործին միջեւ, — Մարք Ֆրօմանի կրած հալածանքը ու նախատինքները պատկերացնելով նոյն ինքն Զօլայի կրածները իր հռչակաւոր «Մամբատանեմ»-էն ետքը բռնած արխարտ ընթացքին հետեւանքով, մինչ Հրեայ Սիմօնը կը ներկայացնէ Տրէյֆիւսի տիպարը:

Վէպին վերջին մասը կը պարզէ ներման խնդրանքին ու վերաքննութեան հետեւանքները: Ժընէվիէ-վ՝ ինքզինքին եկած՝ էրկանը քով վերադարձած է. Մարք Ֆրօման կը վերստանանէ ժօնվիլի իր համեստ գարոյնի ուսուցչութիւնը, չարունակելով հոն իր սկզբունքներուն քարոզութիւնը՝ որուն կը հետեւին իր պաշտօնակիցները: Ժօրժիաւ, ծերացած ու թափառայած, կը խոստովանի իր ոճիրը:

Չեմ դիտեր թէ ձեմարտօքիւնին այս հակիրճ ամփոփումը, կմախք մը գրեթէ՝ Զօլաի գրական ու ընկերային այդ մեծ գործին քով, որ աստիճան գաղափար մը պիտի տայ անոր վրայ: Ամէն պարագայի մէջ, գէթ Մաքսի համար՝ որ հանճարեղ վիպասանին անձոյն ու գործերովը ամենէն աւելի զրազող հայ թերթերէն մէկը եղաւ, — Սկսեալ Գ. Զօհրապի նամակածեւ յօդուածէն մինչեւ Բաբգէն վարդապետի տեսութիւնը — գրական պարտականութիւն մըն էր օրը օրին իր ընթերցողներուն ներկայացնել «Ռուկօն-Մաքար»-ներու հեղինակին վերջին գործը, որուն ձեռագիրն հազիւ աւարտած՝ աչքերը փակեց Զօլա, դուհիի արկածի մը դո՛ւ, ժամանակ չի գտնելով աւարտելու իր «Զորբորդ Աւետարանը»:

Ու ասոր համար մանաւանդ, ինչպէս յօդուածիս սկիզբը ըսի, անդրչիւրմի ձայն մըն է

կարծես որ կելլէ այս երկասիրութենէն, իր ամբողջութեանը մէջ հոյակապ ու գեղեցիկ, — «այն պարզ ու աւանդական դրուագներուն պէս որոնց մէջ՝ հին դարերու հերոսները իւրենց քաջագործութիւնները կը փռուաւորէին»։ Բարիգեան քննադատի մը նմանողութեամբը։

Գ.Ս.ԲԻՐ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԻ ՆՕԹԵՐ

«ԱՆԳՐԱՆԻՆ ԳԵՐԱՍԱՆՈՒՂԻՆ»

—Արուսեակը մեռեր է։

—Այնպէս ըսին։

—Ո՛ր, ե՛րբ։

—Հիւանդանոցը, ամիս մը կայ։

Ուշադրութիւնս լարեցի, լսելով յանկարծ այս խօսակցութիւնը որ տեղի կունենար երկու հոգիի միջև, անտարբեր, անհետաքրքիր ձևով մը, իւր թէ փողոցէն անցնող կառքի մը թաւալման կամ ասոր պէս արկածի մը վրայ ըլլար խնդիրը։ Եւ հակառակ միջամտութեանս, հարցումներուս, միշտ նոյն տարտամ, անորոշ զրոյցը յիշեցին՝ մեր «անդրանիկ դերասանուհի»ին մեռած կամ ողջ ըլլալու մասին։ Պէտք էր երթալ Հիւանդանոցի մահուան տոմարներէն ստուգել, ուր սա տեսակ ցուրտ արձանագրութիւն մը պիտի գտնուի, — ինչպէս են մեռելական բոլոր արձանագրութիւնները՝ աշխարհի ամէն կողմը և ամէն հաստատութեանց մէջ. — «Արուսեակ Պէգիրճեան, թափառայած և ջլախտաւոր. Հիւանդանոց ընդունուած՝ պատասպարուելու և դարմանուելու համար։ Թուական մահուան, 1902 զեկտեմբեր ...։ Թաղուած Պալեզլի գերեզմանատունը, աղքատաց թաղին մէջ»։

Ձի գացի կատարել այս constatation. Ինչ հարկ, այդ խեղճ կիներ շատոնց մեռած էր արդէն բնմին համար ու հասարակութեան համար, և իրմէն կմախք մը, ուրուական մը միայն կը մնար, տարիներէ ի վեր, ուր վարժուած էինք հանդիպելու իրեն, ընդհանրապէս փողոցին մէջ, սև մաշած չրջագգեստի մը մէջ ամբողջաբար իր վտիտ մարմինը ու ճեր-

մակ մաղերը ծածկած շալի մը կամ զլխարկի մը խլեակներուն տակ։ Խուռնաշարժ պզտիկ աչքեր, նիհար ոտկրուտ դէմքի մը վրայ, խուպուտ մարած ձայն մը, անհունին մէջ կորսուող նայուածք մը որ դիմացինին չէր նայեր կամ կը քաշուէր նայելէ, և երբեք քաշուածք մը՝ ցնորածի պէս։ Ահա՛ ինչ որ կը մնար այն մանկամարդ ու գեղեցիկ կընծմէն որ առաջին անգամ բեմ կ'ըլլելու համար ձակութիւն ունեցող հայ դերասանուհին եղած էր։ Իր սկզբնաւորութիւնը 1857ին եղած է, Արեւելեան Թատրոնին մէջ, և իր մեկուսացումը՝ բեմական կեանքէ՝ 1871ին։ Այդ տասնընթուս տարուան չրջանը, ծափերով, ծաղկեփունջերով, ուխտանախերով սկսուած, համակ շլացում ու արբուութիւն, և յուսաւրկարմամբներով, հակառակութիւններով, լըքումով վերջացած, Պոլսոյ Թատրոնի տարեգրութեան է՛ն հետաքրքրաշարժ ու լայն մէկ էջը կը կազմէ, որուն ուշագրաւ դէմքերէն մէկն էր Տիկին Արուսեակ, — զոր Հրաչեայ և ուրիշ փայլուն դերասանուհիներ եկան մթագնեցնել, երբ ա՛ն կանուխէն արդէն դառնացած ու զգուած էր։

Կենսագիրներուն և թատերական ուսումնասիրութեամբ պարապողներուն կիսնայ կենդանացնել այդ անհետացած դէմքը զոր վերջին քառորդ դարու սերունդը ի՛նչ լքուած ու թափառայած վիճակին մէջ միայն ճանչցաւ, առանց որ և է տգաւորութիւն կրելու։ Իր անունը միայն բան մը կ'ազդէր լսողին, անձը չտեսնելու պայմանաւ որ հմայաթափ կ'ընէր։ Սեղմէ ո՛վ չէ կրած այս տխուր տըպաւորութիւնը։

Առաջին անգամ, քսան տարի մը կայ, Ղալաթիոյ եկեղեցիի բակին մէջ տեսայ զինքը։ Ամէն դպրոցէն հոր ելլողի պէս՝ ինչ որ թատրոնի կը վերաբերէր դիւթիչ բան մը ունէր աչքիս. Հրաչեային, Սիրանուգին, Գարագաշեան քոյրերուն ներկայացմանց հրապրոյրը այնպէս երևաւայել տուած էր ինծի թէ այդ սիրուն վառվռուն դերասանուհիներուն անդրանիկը՝ անոնցմէ գերազանց բան մը ըլլալու էր. հաշուի չէի դրած տարիքին աւերումը և աստանդականութեան ընկճումը։

Շատ հայ կենսագրութեանցի հեղինակն էր,

եթէ չեմ սխալիր, որ թեւս հրելով՝ ողբերգական չեշտով մը ըսաւ .

— Կուգի՞ս տեսնել անդրանիկ հայ գերասանուհին . սանդուխին կողմը նայէ՛ :

Կեդրոնականի մարմարեայ ստորձաններէն վար կիջնէր, նոյն վայրկենին, սեւերով կին մը, ստուերի պէս, վերը նկարադրածէս քիչ տարբերութեամբ : Տիկին Արուսեան էր, որ ապրուստի միջոցներէ զուրկ, ճարտաստ, ներսէն Պատրիարքին դիմած էր նոյն օրը իր յուսահատ կացութիւնը պարզելու և նըպատա մը խնդրելու, մէկ—երկու տարեց ժողովականներու առաջնորդութեամբ որոնք հինուց կը ճանչնային զինքը : Պատրիարքը, ախուր ու կարեկից ակնարկ մը ձգելէ ետքը «անդրանիկ գերասանուհի»ին վրայ, անոր առաջնորդող անձերուն դարձած էր՝ հեղնութեան աննշմարելի չեշտով մը ըսելու համար .

— Այս խեղճ կնոջ երիտասարդութեան փայլուն օրերը դուք ծափահարած և դուք քաջալերած էք զինքը իւր ատղաղէզին մէջ . հիմայ ձեզի կիցնայ օգնութեան ձեռք կարկառել անոր : Ինչո՞ւ կը թողուք որ ասանկ փոզոյները թափառի՝ խղճալի վիճակի մէջ :

Հարուածը ծանր էր, և թերեւս աղքեց կարճ ժամանակի մը համար : Պատրիարքը ինքն ալ նպատա մը հասցոյց անշուշտ, լայց որչա՞փ կրնային տեսել ասոնք : Ու ճակատագրային թշուառութեամբ մը, Տիկին Արուսեակ՝ մտքով արդէն հիւանդ՝ իր վատոյժ մարմինը քաշկռտեց տարիներու ընթացքին մէջ, գերմարդկային սովորութեամբ մը, մինչև որ ծիրած, նուաղուն, գնաց ինկաւ Հիւանդանոց ուր՝ մեռեր է «կ'ըսեն» : Իր մահը, եթէ ստոյգ է, ո՛չ իսկ երկտողով մը ծանուցուեցաւ :

Տ. Ա.

Փորձ մը քննասիրութեան վրայ . Հեղինակ Ալեքո . Բօք : Թարգմ. անգլիէրէնէ Գր. Մալխաս : — Վաճառման կեդրոնատեղին Պալենց դրասունը : Պոլիս Չաքմաքճըլար :

ԱՅԾԵՄՆԻԿԻ ՓՈԻՆՁԸ

(Le bouquet de chevrefeuilles)

ՎԷՊ ԱՆՏՐԻ ԹԵՍՐԻԻ

Թ. Տ.

Ը.

Իրիկուն մը երբ կանխաւ որոշած էինք մեր էն սիրուն պոռնաներէն մէկը կատարել, Լիւսի չապտեց իր սրբաշէզին մէջ որոշուած ժամուն : Որովհետեւ ճշդապահ էր սովորաբար, հիւանդ կարծեցի զինքը և թէ և արգիլուած՝ յանգգնեցայ յարկաբաժինին դուռը զարնել : Գիտեցի որ ո՛չ ճրագ կար և ո՛չ ալ ձայններալ : Չարագուշակ թուեցաւ ինծի այս : Քանի մը բողբէ ետքը, սենեկապանուհին կէս մը բացաւ դուռը : Քովընտի ինծի նայեցաւ ու երեսը պահած կերպարանքով մը պատասխանեց թէ տիկինը դուրս ելած էր : Չհամարձակեցայ աւելի հարցափորձել : Բայց Լիւսի այս սխալ քայլը սիրտս կը վիրաւորէր : Բոլոր օրը յուսացած ու խոտացուած հաճոյքէն զրկումիս կը խառնուէր գաղանի հառաչանք մը, ձախող զէպքի մը տարտամ ու աաժանելի նախատեսութեամբ :

Հաճոյք մը չէի զգար մինակս կատարելով դաշտային պոռնար : Գիշերային դաշտանկարը կը կորսնցնէր ինծի համար իր բոլոր հրապոյրը : Այն վայրկեանէն որ Լիւսի կար ա՛լ իբրեւ ընկերուհի : Միւս կողմէ ձախողուածը բոլորովին կը փախցունէր քնանալու փափագս : Տխուր վերադարձայ տուն ու ննջատենեակս քաշուեցայ : Տկար ու ախուր՝ նոյն իսկ ճրագ վառելու սիրա չունենալով, նստուեցայ թիկնաթոռի մը մէջ և որոշեցի սպասել այն ժամուն ուր խոտամազանց Տիկին Տարվիլ պիտի հրէր բանար վանդակապտաը, տուն մտնելու համար : Ո՛ւր կրնար դացած ըլլալ ասանկ ուշ ժամանակ, սիրուն տունը պիտի անցունէր երեկոյթը : Եւ իրօք, ինչպէ՞ս կ'անցունէր սովորաբար այն երեկոյթները որոնք մեր պոռնային վերադաճուած չէին : Երբեք հետաքրքիր եղած չէի այս մասին : Պարզապէս կ'ենթադրէի թէ կանուխ կը պառկէր, լայց

ան իրիկունը, մութին մէջ երեւակայութիւնս
կը չարչրկուէր, կասկածոտ ըլլալ սկսած էի:
Ընթերթէն վերջը իրեն ներկայանալու համար
գրած արգելքը միտքս կը բերէի ու այս
զգուշութենէն կը կասկածէի:

Հոն էի, ամբողջ ժամէ մը ի վեր, երազե-
լու և մտայլ խորհուրդներս փարատելու հա-
մար, երբ յանկարծական աղմուկ մը սթա-
փեցուց զիս: Գրասենեակին պատուհանը կէս
բաց թողած էի, ու լսեցի որ դայն կը հրեն,
նախ կամաց մը, յետոյ ուժգնութեամբ:
Սիրտս բարախեց: Արդեօք Լիւսն էր որ կը
դառնար ու որոշած էր անակնկալով մը փո-
խարինել կրած զրկանքս: Սթափեցայ իսկոյն
ցնորանքէս, գրասենեակին տախտակամածին
վրայ երկաթագաժ կօշիկներու ծանր բաղ-
խին մը լսելով: Լիւսը չէր եկողը, այլ չա-
րանպատակ այցելու մը որ պատուհանէն ներս
կը մտնէր: Ելայ և լռիկ ձեռքս առի վեց-
հարուածեանս: Հիմա ոտքի վրայ ու խիտ
յուզուած՝ գաղտնի կը դիտէի, որպէս զի
գողը բռնեմ ոճիրին նոյն իսկ գործուած մի-
ջոցին:

Տեսայ լուցիկի մը զարնուիլը. գրասե-
նակը լուսաւորուեցաւ մասամբ շարժուն դու-
ծիքով մը որ հաւանաբար գողի լապտեր մըն
էր: Բանի մը ըսպէ ետքը դողը ուղղուեցաւ
դէպի դարանը ուր կը փակէի գրասենեակս, և
գուշակեցի որ կը ծնրադրէր որպէս զի սկսէր
գործին: Օգուտ քաղեցի այս վայրկեանէն՝
դուրս ելլելու համար, վեցհարուածեանս
չեղանկի ուղղելով չարագործին վրայ:

—Եթէ չարժիս, դոչեցի, կը պարպեմ
վրադ:

Ապշած՝ մարդը կանգնեցաւ յանկարծ ու
դառնալով զիս քննելու համար.

—Բռնուեցա՛յ, մրմռաց ակամներուն տակէն:

Գետինը դրուած լապտերը կը լուսաւո-
րէր զինքը վարէն վեր: Ապշութիւնս որքա՛ն
մեծ եղաւ ճանչնալով գողը՝ այն մութացիկն էր
որուն հանդիպած էի քանի մը անգամներ
Տիկին Լիւսի հետ ունեցած պտոյտներու ա-
տենը: Սխալմունք չկար, Շիֆֆոտէլ ինքն
էր անձամբ, խառն ի խառն մօրուքով, իր
բօժօժաւոր թաղիքովը, կարկտած ծուէն

ծուէն տափառովը, թել թել բամպակեայ
լաճկոնովը:

Ինքն ալ զիս ճանչցած էր. վայրի անա-
տունի աչուքները կ'երթային կուգային մտա-
հոգութեամբ, յետոյ կը կենային սարսափա-
հար ակնարկ մը արձակելու համար ինծի:
Մէկ ոտու մով դոցեցի պատուհանը իր անց-
քը արգելելու համար և հարուածս չխտակ
իրեն ուղղելով.

—Ի՞նչ, դո՛ւն ես թշուառական, գոչ
չեցի:

—Այո՛, ես եմ, պատասխանեց բեկեալ
ձայնով մը. աղէկ բռնեցի զիս, չեմ վախնար
սակայն, ի՞նչ փոյթս:

—Մութայէն ճանճրացար՝ գողութեա՞ն
սկսար հիմայ:

—Ի՞նչ ընեմ, անօթութիւնը դայլը ան-
տառէն կը հանէ, կ'ըսեն, ա՛լ ձուկ որսալու
միջոցները չորցան, հիմա պահապաններ հառ-
տատուեցան: Գալով մութացեալութեան, ա-
նոր մէջ ալ չա՛ն չմնաց: Մրցումը չառցաւ ու
տեղացիներն ալ քարոտրտ եղան: Այս առ-
տու տեղէս ելայ, փորս անօթի, անտուկիս
մէջ չոր կոտոր մը հաց անգամ չկար: Ջաղաց-
քի կամուրջին վրայ հանդիպեցայ հասառուի
մը որ կը քալէր, զիրուկ՝ ուռած. ողորմու-
թիւն խնդրեցի. «Ատուած սայ» ըսաւ «չատ
կը մսիմ, ձեռքերս գրպանէս չեմ կրնար հա-
նել»: Մտածեցի ինքնիրեն որ եթէ ջուրին
մէջ հըէի՝ ա՛լ աւելի չպիտի՞ պաղէր: Ու ի-
րաւ, պահ մըն ալ այդ գաղափարը ունեցայ,
Բայց չի գործադրեցի: Ինքնիրենս ըսի,
«պաշտօնեան ամէն իրիկուն իր գրասենեակը
չէ, ու մինչդեռ անիկա անուշիկ ժամանց-
ները կ'ըմբռնէ մինակը, ստակները կը ձանձ-
բանան դարակին մէջ... Թերեւս հոն լաւ
պատառ մը ձեռք անցունենք:»

—Ու որոշեցիք դալ այսպէս կողոպտոն՝
զիս:

Շիֆֆոտէլ ուները ցնցեց.

—Բայց, յարեցի, ինչո՞ւ զիս բացակայ
կարծեցիք, կրնայի վերադառնալ ու զձեզ
ափիս մէջ սեղմել այսպէս:

Գողը աչուքները քթթեց:

—Խոշոր խաղ մը չէր խաղալիքս: Արդէն
տեղեկացած ու ծրագիրս չինած էի: Դի-
տէի որ դուք պտոյտ կ'ընէիք նախորդ պաշ-

տօնէին կնոջը Տիկին Տարվիլի հետ ու ընտ-
կանաբար ձեր վրայ միշտ կը հսկէի: Այս ի-
րիկուն Աթի մարգագետինը նշմարեցի ակիկնը
թեւ թեւի պարոնի մը հետ որ խիստ մօտէն
կը սեղմէր զայն: Իմ տաարակներս, մտածեցի,
այնքան բուռն հաճոյքի մը մէջ թաղուած են
որ ստակը միտքերնին անդամ չդարձնուչա-
շատ կանուխ չեն վերադառնար, տունը պա-
րապէս է:

Չէի կրնար զսպել սարսուռս, սակայն և
այնպէս ջանացի քօղարկել յուզումս ու ըսի.
— Խաբու՛ւ ես:

— Այո՛, կը հասկնամ, կրկնեց եղական
խնդուքով մը որ վեր վերցուց շրթունքները
ու ցոյց տուաւ սուր ակառները: Դուք չէք
եղեր, ուրիշ մըն է եղեր: Դուք ալ, խեղճ
պարոնիկս, դուք ալ խաբուած էիք և հե-
տեաբար գողցուած: Տիկնոջ թեւ տուող
պարոնը գրեթէ ձեր հասակը ու տարիքը ու-
նեցող երիտասարդ մըն էր, թերեւս ասոր
համար խաբուեցայ ես ալ:

— Տիկնոջ վրայ քու ունեցած կարծիքնե-
րուդ մէջ կարելի է դուն ալ խաբուած ես,
ըսի խայթուած կերպարանքով մը:

— Է՛հ, կարելի է, թէև նոյն ինքն տիկին
Տարվիլն էր՝ իր կարմրորակ շրթներովը ու
գանգուր մազերովը: Ասկէ դատ, Շարուի
մէջ այնքան հաճոյալի այնքան կայտառ ու
ոիրուն չարժուածեւեր ունեցող մէկ մըն ալ
չկայ: Իմ ամէնէն մեծ սխալս պարոնը մօտէն
աչքէ չանցունելու եղաւ: Ի՛հ, որո՛ւ հոգ,
անմատութիւն մը ըրինք ու բռնուեցանք:

Ալ մտիկ չէի ըներ զայն: Կը մտածէի
Լիւսի վատութեանը վրայ, իմ անոր հետ ու-
նեցած վարուելակերպիս միամտութեանը վը-
րայ: Կը յիշէի իր զգլխիչ չնորհքը, իր զայ-
րալից դիմադրութիւնները, քծնող պաղա-
տանքները ու դեռ կը վարանէի զայն յան-
ցաւոր կարծելու: Կը հարցունէի ինքզինքիս
թէ ինչպէ՛ս այնքան սեւութիւններ կրնային
բոյն դնել այնքան սիրուն արարածի մը սրբ-
տին մէջ:

— Հիմա զիս ի՞նչ պիտի ընէք:

Աչքս վեր առի, լապտերին դժգոյն լու-
սաւորութեան մէջ զիտեցի իր աղտոտ երեսը
որ, պահ մը ողկւորուելէ ետքը, արած էր

աղօտ ու ապուշ արտայայտութիւն մը: Բնեցի
թաղիքը, մաշած ծակոտած հողոտ բաճկոնը
ու գլխայի սոյն կենդանի կմալքին վրայ:
Ասկէ դատ չատ մը պատճառներ զիս կանխա-
տարմադիր բրած էին ներդաւմտութեան:
Շրիֆտուէլ դաղանիքս գիտէր, կրնար շա-
ղակրատել. թէև Լիւս վատաբար խաբած էր
զիս, չէի ուզեր սակայն զանի վտանգել:

— Վստահ եղիր, կրկնեցի, քեզի ձեռք
չսլոտի տամ, կծիկը դիր ու մէյ մըն ալ մի՛
ըներ ատանի բան:

Բայց մօբայկանը տեղէն չէր չարժէր,
դուող ու փոքրիկ աչքերը անարգօրէն վրաս
յառած, ու կը մուտար.

— Ո՛ւր կուզէք որ երթամ. . . փոտի մը մէջ
անօթութենէ ձաթելո՞ւ. . . Կը նախընտրեմ
բանալը տւր գոնէ հայ մը ու խշտիկ մը կու՛ւ
նենամ:

Խորամանկ ու չարամիտ էր, թէև ցոյց
չէր տար երեսէն, հասկցայ որ դուշակած էր
վերապահութիւններս ու կը մտածէր քիթէս
բռնել: Շնորհակալութեամբ գործադրեցի
մտադրութիւնս: Դրպաններս խառնեցի, հա-
նեցի ճիշդ ֆրանքոսց մը որ վերջինն էր.

— Ա՛ւ, ըսի ստակը ձեռքը տալով, ահա
ւատիկ ուտելիքի դրամ մինչև որ գործ մը
գտնես: Հիմա, աւելցուցի, որոշում տուած
կերպով մը վերցունելով վեցհարուածեանս,
կորուէ՛ գնա, երկու բոպէ միայն՝ հեռա-
նալու համար բնակարանէս:

Այս անգամ հաղկաւ որ պէտք չէր դի-
ծարայեղութեան մղել, զբաղանց ստակը,
լապտերը առաւ, մարեց ու քայլերը ուղղեց
դէպի սրատահանը:

— Շա՛տ աղէկ, գոչեց, ահա կերթամ
Բայց վանդակապատը անցնելէ առաջ վե-

րադարձաւ ու ծաղրական դէմքով մը ըսաւ.
— Շնորհակալ եմ, բարեկամս, որովհետեւ
վիհանձն տեսայ ձեզի, ուստի լաւ խորհուրդ
մը պիտի տամ: Զգուշացիր զիմացի սիրուն
փոքրիկ տիկինէն, անկիա քեզմէ աւելի գօրա-
ւոր է, գաւաղա Բարդաղուրի կին մըն է ան,
ու մինակ դուն չես իր համբախ. . . Առանց զքեզ
հաշուի դնելու, ունի երկու՝ թերեւս երեք
սիրահար ալ: (Վերջին մասը յաջորդով)

Արսօնաէր Կ. Ս. ԻԿԹԻՒՃԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՅ Օրագրի



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎ ԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ




ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾԻ

Ընկերութեան զրամագլուխը, ամբողջապէս վճարուած	10,667,667	Ֆրանք
1901 տարւոյ մէջ դանձուած ապահովագրիներ ու տոկոս	54,000,000	»
Երաշխաւորութեան գումար	122,000,000	»
Ապահովագրեալներուն վճարուած գումար	249,400,000	»

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ Բարափին վրայ, Մաֆասան հին տեղը

Ընդհ. ԲՆՆԻՅ
Ա. ՀԻԻՐՄԻԻԶ

Ընդհ. Գործակալ
Թ. ԵՌՏՈՐ Ռ. ԵՐԵՒՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննեայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է։ Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, բաքի ու սաքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բոլորողակ աշխարհի մէջ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գտնէ։

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ։

ՇԱՐԲԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

- | | | |
|---------|---|--|
| ԲԱՐՍ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին. |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյաղիա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԿԻՏՍՐ | | Չարքը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կատարեալ երաւարարութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը։

Տ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ի ի ն ի ՅՆ Ապահովագրական Ընկերութեան
Տնօրէնութիւնը յառաջիկայ 1/14 մարտէն
սկսեալ իր գրասենեակները պիտի փոխադրէ,
Պոլիս, Սուլթան Համամ նորաշէն Գաթըրճի
Օղլու Բասար:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐԻԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ-ՓՈՂՈՑ, Թ. 200

ԿԱԼԱԹԱ-ՍԷՐԱՅԻ ԼԻՍԵՆ ԴԷՄ

ԳԵ. ԵՇ. ՇԲ. օրերը առաւօտեան կանու-
խեմ մինչեւ իրիկուան ժ. 11¹/₂
ԲԵ. ԴԵ. ՈՒՐ. օրերը ճեմ մինչեւ 11¹/₂
Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏՈՔԹՈՐ Լ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ՎԻՐԱԲՈՅԺ-ՄԱՆԿԱՐԱՐՁ

Մասնագէտ կանանց հիւանդութեանց
(Վկայեալ Բարիգէն)

Կը դարմանէ ներքին ու արտաքին հի-
ւանդութիւններ, կը կատարէ վիրաբուժա-
կան գործողութիւններ՝ վերջին կատարելա-
գործեալ դրութիւններով:

Բարիգի, Նանսիր հիւանդանոցներուն
մէջ երկար տարիներ օգնական-լուծիկի (եքս-
քերն) պաշտօնը վարած ըլլալով, գործնա-
կան ու փորձառական երկար ուսումնասի-
րութիւններ ընելէ վերջ, այս անգամ Կ.
Պոլիս եկած եւ հաստատուած է Բերա,
Թարլա Պաշը, Թիւ 136:

Ծանօթ.— Հիւանդներ կ'ընդունին ամէն օր
կէս օրէն վերջը իր բնակարանին մէջ, ժամը
1-4 (Ը. Ե.). Երեքշաբթի օրերը միեւնոյն
ժամուն ձրիաբար կը դարմանէ կարօտ հի-
ւանդները:

7—20

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1828-1829

Հ Ի Դ Ե Հ Ի Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ փնտք	240,000,000	Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	105,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000	»

Կ Ե Ն Ս Յ Զ Ի Ի Ղ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ փնտք	99,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնը	253,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստ	150,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Խնդիր»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ՝ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ-
ԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիներով: Նպաստաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան
պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Խնդիր
ապահովագրողը ԶԵՐՄ են այն վնասներէն եւ յուսալաբութիւններէն, որոնց
կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation
des bēnēfices) ՅՈՒՐԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապա-
հովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ
Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւնը

Կ. Պոլիս, Կալաթա, Թահրապուրն համ, Օսմ. Պանգային դիմացը
Գործակալութիւնը Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ